Համաձայնագիր-1
23.09.2019թ. կնքված N ՊԵԿ-ՄԱԾՁԲ-19/3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «17» հունվարի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ռ.Մալումյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.09.2019թ. կնքված N ՊԵԿ-ՄԱԾՁԲ-19/3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1965-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանելով մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Հ.Էմին 80շ. բն. 26
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011028363	Հ/Հ 2052822122781001
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00125931
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ռ.Մալումյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ